

# ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

ՆԵՐԻՄՈՒՆԻՔԻ ԳԻՒԱՅ ՆԻ Ա.ԽՏԻՑ՝

Է. ԳՐԱԳԱՆԱԿՆԵՐ

զաւորն կոզդիոս ուղղեալ նամակէն հաւ  
 նած Հառնակի ձեռնարկութիւնն կը ջրուի՝  
 նիկ. Աւետարանի (Gesta Pilati) լատ.  
 Ա խմբագրութեան (p. 413) նշանաւոր  
 տարբերութեամբ՝ և Յիշատակարանք Պի-  
 դատոսի հայերէն խմբագրութեան վերջը  
 (էջ 359 և 379) հրատարակուած, ինչպէս  
 նաեւ Տիշէնդորֆի Ա. 'Αναφορά Πιλատού  
 հրատարակութեան (p. 435) ներքև դրուած  
 յուն. CDE Զեռագրաց ներկայացուցած  
 տարբերութեամբ : Վասն զի փոխանակ  
 կոզդիոսի՝ Տիբերիոս խորագիրը կը կրեն  
 այդ նամակաց պատճէնները : Ուստի բնաւ  
 զարմանք չէ, ըստ իս, որ Պիդատոսի Յի-  
 շատակարանները դեռ յունարէն չթարգ-  
 մանուած՝ Եւսեբիոս ալ առիթ ունեցած  
 չըլլար կարողալ զանոնք. բայց յոյժ զար-  
 մանալի է այսպիսի բնական երեւութէ՛ մը  
 լոկ՝ այնպիսի անբնական բան հետեցնել,  
 որը կրնար նոյն իսկ ընդորինակողաց ձեռ-  
 քով սարդած վրիպակ մ'ըլլալ :

Եւրոպացի բնագատներէն նիկ. Աւե-  
 տարանի մասին արտայայտուած թեր ու  
 դէմ կարծիքները այսպէս ծանօթացնելէն  
 ետքը մեր ընթերցողներուն, այժմ տես-  
 նենք, թէ հայկական թարգմանութիւնն՝  
 ի՞նչ աղերս ունի յունարէնի հետ, և թէ  
 ո՞րքան կը նպաստէ անվաւեր գրքիս ու-  
 սումնասիրութեան :

Է. Գ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Շարունակելի

1. Ուր Marc Heg text gr. ունի. «Six Clau-  
 dio Tiberio Neroni imp».

2. Տես Անկանոն գիրք Նոր կտակարանաց,  
 տպ. Վենետից 1898. Հտ. Բ. եր. 313-380.



Այս անուամբ ու բաժանամբ կ'ուզեմ  
 նկատել յատուկ դասակարգ մը գրաւոր  
 պահպանակաց, զորս հիներն իրենց իսկ  
 ձեռքը պատրաստեց ու մեզ են հասուցեցր :  
 Ասոնք այնու կը զանազանին «գրքերէն»,  
 որ վերջինքս համառօտ էին, բովանդա-  
 կելով լոկ երդմանց մին՝ ըստ պարագա-  
 յին : Այսու միայն կարելի էր «ի փողոս»  
 կամ «ի բազուկս» կապել զանոնք . և  
 ծննդականի գիրը կ'այրէջին իսկ, ինչպէս  
 տեսանք (աստ, 429-30, 432) : Ինչ հա-  
 կառակն գրապանակները շատ ընդարձակ  
 են, մեկի փոխան ամփոփելով բազմաթիւ  
 աղօթքներ, և սահմանուած միշտ անեղծ  
 պահուելու. տեսակ մ'ախտաբքներ գրա-  
 պանակի ձեւով : Մեծ հնութիւն մը չու-  
 նին ասոնք, հազիւ ժիյ դարէն կը սկսին,  
 գէթ ինձ ծանօթները : Բայց հարկաւ վեր-  
 ջին սահմանը չէ այդ. զի հաճ Յիսուսի  
 օրերէն իսկ տեսանք Հրէից քով բուն իսկ  
 զատոնք. «լայնեն զգրապանակս» (Մտթ.  
 ԻԳ, 6. և աստ, 428) : Երդներն յար և  
 նման տարածուած էին արեւմտեայց մէջ  
 ալ, որոյ ծագումը սակայն անյայտ է՝ ըստ  
 կարբոլի (Ա, 1855) : Գիտենք աղոնք գոր-  
 ծածութիւնը մահմետական ցեղերէն եւս.  
 գրիչ մը 1828ին կը պատմէ՝ թէ կորդու-  
 փանէն եկած ընձուպոն «յուռութ մ'ունի  
 կախուած վզէն (նման մեր անասնոց կա-  
 խելուն, աստ 430) : Այս յուռութը գրուած  
 է մագաղաթեայ երիզի մը վրայ. և կը  
 կազմուի՝ բաց ուրիշ յօդուածներէ՝ կու-  
 բանի բազմաթիւ կտորներով, որոնք պի-  
 տի պահպանեն ամէն ցաւերէ, դիւթու-  
 թիւներէ և չարակնութենէ» (անդ, ծն. 2) :

1. Տես և յէջ 49, 107, 257, 321, 369, 421.

1. — Հոյ գրապահակներ: — Կատա-  
 րեկապէս նման են աղոնց. բոլորը թղթի  
 վրայ, ժապաւինածն երկար ու զարարուն  
 շերտեր: Չոռնին որոշ սահման մը. այլ  
 թէ նիւթական մեծութեամբ և թէ բովան-  
 դակութեամբ քիչ կամ շատ կը զանազա-  
 նին իրարմէ: Վանացս օրինակները, թուով  
 իբր քսան, և բոլորն ալ ժիւ — ժիւ դա-  
 րուց, ունին երկայնութիւն 3, 35էն մին-  
 չեւ 10 մետր, և լայնութիւն՝ 3, 8էն մին-  
 չեւ 10, 5 հրդ. երկու չափերն իրարու  
 համեմատական միշտ. իսկ մին՝ 1778ին  
 գրուած, երկայն է 26, 50 մտ. և լայն  
 10, 5 հրդ. և դեռ ամբողջ չէ:

Աղոնք ունին կրկին նպատակ. մին՝  
 իրբեւ պահպանակ կը գործածուէին, ինչ-  
 պէս հին «գրերը»: Եւ արդարեւ 1677ի  
 օրինակին յիշատակարանը զայն նոյն իսկ  
 «գիր» կ'անուանէ. և 1710ի, '13ի, '15ի,  
 '61 օրինակները կը կոչուին՝ իրենց մահ-  
 մետական նմանակցաց պէս՝ «համայիլ»  
 կամ «հէմայիլ»: 1693ինը գրուած կ'ը-  
 սուի «պահպանութեան ծառայիս Այ. Սա-  
 հակին», և 1761ի գրապահակին համար՝  
 թէ «ամէն չարեցն փրկեաց(ց)է», և 1742ին՝  
 «փրկեացէ երեկելի և աներու (անեբեւոյթ)  
 թշնամուն»: Ասոր համար բոլորն ալ ըս-  
 տացողին անուշը կը կրեն իրենց աղօթից  
 մէջ, իբր անոր անձնական պահարանը:  
 — Երկրորդ նպատակն էր կարգալ զայն  
 ըստ պարագային. 1690ի օրինակն այստ-  
 նապէս կ'ըսէ աղօթքի մը զլուխ՝ թէ «որ  
 կարգալ՝ կատարի ամենայն ինդրուածք  
 իւր ի բարին Ավ.», և 1693ինը գրուած  
 է նաեւ «ի վայելունն»: Ասոր համար խը-  
 ճողուած են այնքան աղօթիք և ինամով  
 պատկերազարդուած: — Անոնց համա-  
 ոտները, 3, 35 — 4 — 4, 50 հրդ. լայնու-  
 թեամբ, գալարուելով այնքան փոքր են,  
 որ կրնային նաեւ դրուիլ «ի դրճի» և կա-  
 խուիլ վզէն. մինչդեռ ընդարձակները պէտք  
 էին զտեղուիլ գրպանը, բարձին ներքեւ և  
 այլն:

Բոլոր ծանօթ գրապահակաց բովանդա-  
 կութիւնը կրնանք ամփոփել հետեւեալ  
 սահմանի մէջ: Հաւաքածոյ մը, աւելի կամ

նուազ ընդարձակ, Կիպրիանոսի և ուրիշ  
 ախտարաց. այս ինքն բժշկական աղօթք-  
 ներ առ Աստուած, առ սուրբս և հրեշ-  
 տակս, մերթ առ զանազան նշխարս տէ-  
 րունական խաչին. գրեր. սովորաբար  
 Ենորհալույն «Հաւատով խոստովանիլը»,  
 Երբեկացույն «Որդի Աստուծոյ» և «Ըն-  
 կալ քաղցրութեամբ» աղօթքները, և եր-  
 բեմն ս. Գրոց ընթերցուածներ եւս:

Աղոնց մէջ հնագոյնն է ՊՊՁ (1447)  
 թուին գրուածը, զոր տեսայ Ուս. Տեզայի  
 քով. երկայն 15 մ. թէեւ տակաւին պա-  
 կասաւոր է, և լայն 7 հրդ: Սա բաց  
 յայլոյ ունի՝ իբր ոչ սովորական՝ ցուցակ  
 մ'Աստուծոյ «հազար և մի անուան», որոյ  
 ակնարկութեան հանդիպեցանք յառաջ ալ  
 Կիպրիանոսի մէկ աղօթքին մէջ՝ (աստ,  
 423), և հաւատոյ դասանութիւն մը: —  
 Հնութեան կարգով ասոր կը յաջորդէ  
 Վիեննայի Միտիթ. Հարց մի գրապահակը՝  
 Ջիկ (1476) թուին. երկայն 2, 86 մ.  
 (պակասաւոր), լայն 8 հրդ. և բովանդա-  
 կութիւնը համաձայն այլոց (Յուսակ Հ.  
 Տաշեանի, էջ 915, 9): — Հետեւաբար  
 գրապահակի այս ձեւը ժամանակակից կը  
 լինի փոքր գրերու, գէթ մեր օրինակին՝  
 ժիւ դարուն, և անոնց հետ գործածուած.  
 Թէեւ պատճառ մը չկայ զայն աւելի հին  
 եւս չենթադրելու, ինչպէս ըսինք վերեւ:

2. — Անոնց նկարը: — Այդ երկուց  
 արուեստական կողմն ալ կայ. առաջինն  
 երկուստեք իբր շրջանակ ունի մի մի զոյգ  
 կարմիր գծեր, և աղօթքներն իրարմէ կ'ան-  
 ջատուին կարմրագիր հրահանգօց ու սկզբ-  
 քնաւորութեամբ: Երկրորդն ունի դեղնա-  
 գոյն շրջանակ, նոյնպէս կարմրագիր բա-  
 ժանուններ, և երկու բազմագոյն նկար,

1. Վանացս 1690ի օրինակն ալ ունի նոյնը: Այդ  
 անուանք մակդիրներ են, արդէն ծանօթ կամ նոր յօր-  
 նուած, և այբբենական կարգով դասուած. ահա ճաշակ  
 մը. «Անկիզբն ած. անկզ ած. անիմանալի ած. անհա-  
 սանելի ած. . . ամենարագ ած. ամենարեկրեաց ած. . .  
 բարձր ած. քրտմալ ած. բառնել ած.» են: Ուրիշ ած.  
 թուական նոր գրապահակի մը մէջ եւս կան «Անուանք  
 Այ. հր (62) լեզուաւ. Թեոքիտ Թաս. Ակիւսաս. Սաթէր-  
 Մէսիսա. Եմամանուէլ. Ադոնիոյս. Աթանասոս. Աթուսոս,  
 Պանսիբոս. Ատանաէս» են:

որ է կին մը և թռչուն: — Ասոնք սկիզբն են արուեստին, որ աւելի վերջ՝ վանացս օրինակաց մէջ բաւական զարգացման հասած է, ստանալով ընդհանուր նկարագիր մը: Եւ է այս նորջնանկի սովորաբար գունաւոր պարունակ մը: Աղօթքներէն շատեր իրենց վերեւ ունին բազմագոյն պատկեր մը, ներկայացնող տէրունական և երբեմն հին կտակարանի յիշատակաց. կենդանագիրք Տիրամօր, հրեշտակաց կամ սրբոց՝ որոց նուիրուած են, և կամ անոնց անուանի հեղինակաց, այս ինքն աւետարանչաց, ս. Կիպրիանոսի, Շնորհաւելոյն. մերթ եւս անոնց բովանդակութեան պատկերացումը: Իսկ գրապանակին գլուխ՝ յաւորդարար գետեղուած են երեքէն մինչեւ վեց պատկերներ: Բոլոր ասոնք շինուած են նպատակաւ պահպանութեան, և ոչ սոսկ պաճուռանաց: Համառոտ աղօթքներէն ոմանք ամփոփուած են գունաւոր բոլորակի մը մէջ իբր զարդ: Մէկ կամ աւելի աղօթից տողեր դասաւորուած են վերուստ ի վայր առ ի շեղ կարգով, իսչաձեւելով զիրար և աղիւսակ մը կազմելով: — Այս ոճով շինուած են, աւելի կամ նուազ ճոխութեամբ և յաջողութեամբ, մեր 1677, 1703, '10, '13, '15, '42, '61, և այլ տարիներու օրինակները: 1778ին ունի միայն կարմրագիծ իսչեր, մարդադէմ լուսին, աստղեր ու գիսաւոր մը, մատանահարը զոր պիտի տեսնենք, և արտարական մթին նշանաձեւեր:

Բայց գեղեցկագոյնն է 1690ի գրուածը, որոյ թուականը սակայն աւելի նոր կը թուի քան զընտրութիւնը, և զրուած երկրորդ ստացողէն՝ որ ջնջեր է նախորդին անունը և իրենը գրեր: Երկայնութիւնն է 10 մ. (պակասաւոր), և լայնութիւնը 10,5 հրդ: Շրջանակն յօրինուած է՝ իրարու հակառակ նայող կարմիր ու կանաչ տերեւանման զարդերով: Գլխի նկարուց մէկ մասը կտրուած է, և կը սկսի քառասուն կուսանաց փոքրիկ կենդանագրովք, լոկ իրաններ, շարուած տամուչորս կարգի վըրայ՝ երեք երեք: Անոր կեց՝ փրկչական

զատառակը՝ բռնուած սուրբէ մը, որ թեւ ընկն սուրհանդակը լինի: Ուրիշ սուրբ մը ծնրադիր կ'աղօթէ Աստուծոյ՝ որ կ'երեւի ամպերէն: Այս տեղ կը սկսու գրութիւնք՝ հազար և մի անուանց ցուցակով, և մէջ ընդ մէջ կենդանագիրք, որ են՝ հայրապետի մը: Սերաստիոյ քառասուն մանկանց՝ կուսանաց ոճով. Շնորհաւելոյն. Տեսանընդառաջի պատկերը. բըժըշկութիւն երկու կաղաց ի Փրկչէն. երկոտասան առաքեալք բոլորակաց մէջ, լոկ իրաններով. ասոնց գլխաւորք՝ առանձինն և կանգուն՝ վեր կը բռնեն եկեղեցին. Տիրամայրն Յիսուս մանկամբ՝ նստած յաթոռ. խաչելութիւնը. ՅՏ. Մկրտիչ՝ գրկած իւր գլուխը: Ստեփանոս և Լուսաւորիչ՝ իրենց սրբազան տարազուց մէջ. Գարբիէլ հրեշտակապետը պահապան կանգնած ննջող մարդու մը վրայ. աղօթից երեք շրջանակներ. Արքահամու զոհը, յարակից աղօթից աղիւսակով. վիշապասպան ս. Գեւորգ ձիաւոր. ս. Սարգիս՝ իւր որդին առած ձիոյն զաւակին վրայ. և վերջապէս Ալի կշտամբումն Յիսուսէ: Եւ ամբողջ գործը հարուստ խճողում մ'է կարմրի, կապուտի, կանաչի, դեղնի, մանիշակի, զորշի, և քիչ մ'ալ ոսկւոյ: Մարուր աշխատութիւն մը, որոյ մէջ սակայն պէտք չէ փնդող նկարչական նրբութիւնը և դիմագծերու պահանջուած զանազանութիւնը:



Ը. ԱՅԼ ՊԱՆՊԱՆԱԿՆԵՐ

Բնդհանուր քրիստոնէական և հայ հընտրութիւնը գործածելը են ուրիշ այլ և այլ ձեւերով պահարաններ եւս, որոց մնացորդք շատ կան այսօր արեւմտեայց մէջ: Գիտարտարար նոյնը չենք կարող ըսել մերոց համար, զորս աւելիչ ժամանակը կրթութիւն տարեր է, բաց ի սակաւուց, որոնք գէթ իրենց որակով կ'ընծայեն մեզ քա-

1. Եղիպտոսի մէջ շատ յաճախեալ էին Քառասնից անուամբ զրկըր (Կարբու, Ա, 1814):

ւական յագուրդ մը: Ասոցմէ ցոյց պիտի տամ ինչ որ յայտնի է ինձ, ապագայ խուզարկութեանց ու պեղմանց թողլով աւելին ընձեռեալ:

ս. Ծանօթ է Արժօրունեաց Մլըէ թագուհւոյն անուանի աւետարանը՝ որ կը պահուի վանացս մէջ: Ասոր Մարկոսի ծայրը կայ գրչութեան երկսիւն մեծ յիշատակարանը, զոր երկրորդ ստացող մը քերքեր ու տեղը նոր մ'է գրեր: Հնոյն ներքեւ, լուսանցին վրայ, երկսեան հիշող կեղորոնք, առաջին գրչէն դուռած է՝ 2,7 հրդ. երկայնութեամբ տառս՝



ինչ կը նշանակէ այս: Նկատելով յարակից յիշատակարանին անընթեանի վիճակը, դա գրութեան թուականը կարծուեցաւ, իբրեւ նոյն տարին գաղափարուած՝ վարագայ «Ս. Նշանի» համար. և ուրիշ մը՝ ՅՄԱ՝ որ կայ այլուր, Մլըէի կողմանէ վարագայ «Ս. Աստուածածին» ընծայման տարեթիւը համարուեցաւ<sup>2</sup>: Սակայն ես նոր քննութեան մը բովէն անցընելով մատենանք, տարբեր եզրակացութեան յանգեցայ: — Անոր վերջին էջին վրայ՝ քառակուսի շրջանակի մը մէջ իրարու ներքեւ նշանակուած կան՝ ժամանակի ըտլորագրով՝ հետեւեալը. « Նկ 2 Թբթ Թ - ՅՄԱ Թ. - Արաց ԻԸ, Բ - Արեզ 2, Ե՝ »: Ինչ են ասոնք, եթէ ոչ գրչութեան հանգամանքները միտաօն ամփոփուած. այս ինքն՝ Թբթից քանակը, տարեթիւը, և

հաւանօրէն սկզբնագրութեան և աւարտման ամիսներն, օրերն ու ժամերը. պարագայը՝ զորս ոչ ոք պիտի ուզէր կամ կարենար արձանագրել՝ բաց ի գրողէն: Ապա ուրեմն ՅՄԱ իսկ է գրութեան բուն թուականը:

Աւելին կայ: Մլըէ երկու տեղ ինքզինքն աւետարանիս «ստացող» կը կոչէ. և գրչագրաց մէջ թարթափողներս գիտենք՝ թէ այդ բարդ սովորաբար, մանաւանդ երբ առանց ուրիշ վերադրի գործածուած է, գրել տուող կը նշանակէ: — Դեռ աւելին կայ: Նոյն Մլըէն՝ անեղծ պահուած (և լուկ թուականը խարդախուած) յիշատակարանի մը մէջ կ'իմացնէ՝ թէ ամուսին է Գագկայ. և թէ սոյն մատենանք շնորհեր է « ի վարագի սբ Աձածինս, զոր իմ ձեռամբս և ծահաւք եմ շինեալ՝ յազնականութիւն ինձ և արքային իմոյ ԳԱԳԱՍՅ » ևն: Արդ՝ եղծուածին մէջ ալ, որոյ աւարտը յաջողեցայ աւելի մանրամասնօրէն կարդալ, կան նոյն թագաւորը, ցարդ անընթեանի մնացել և նոյն հանգամանք. որով սոս ևս Մլըէի համար է: Ահաւասիկ կը կտորը. «...՝ զար յիկեաց վասն առ յնշատոյթի ԳԱԳԱՍՅ եւ յիկոտրն հոգոյ իրոյ եւ մեղաց եւ լորտ յանգանաց բողոսրի: Իսկ որ հակառակ հյանե եւ ձանե գցիրս ի վարագայ, իկքե ըտտացի յԱյ եւ ի սբ Եշանե՝. եւ սր պահե յեկեղեցիս, քե քոց յատր [է՝ առ ինկե] ալ [եկեցի] յԱյ »:

Արդ՝ ըստ որում այս յիշատակարանս ալ մի և նոյն տիկնոջ է, կարելի չէ՝ որ ասոր յաջորդող Յ տառը գրութեան կամ որ և է թուական լինի՝ իւր 51 տարւոյ հնութեամբ ՅՄԱ յայտնի տարեթուէն, ուր թագուհին զեկեղեցին կառուցեր, ու բնական կարգով անոր համար ևոր և իսկապէս արքայավայել աւետարան մ'է գրել

1. Յառաջ քերուած նաեւ նոյն աւետարանի նկարուց մեր նմանական ճրատարակութեան մէջ, առև. 2.  
2. Բազմ. 1909, էջ 433.  
3. Ասոցող կեց տառերը պատիւ կը կրեն, ուստի թուանշան են:  
4. Յայտնի է՝ թէ ազկից յառաջ պատմուած էր աւետարանին գրութիւնը, և ընծայուեալ առ Աստուածածին ՆՈՅՆՄԲԵՐ 1910

Վարագայ՝ «զոր շինեաց» նոյն Մլըէ են, ինչպէս նա. իորդին մէջ: — Կտորիս համառոտագրութիւնը՝ ... քե, սր և յայ՝ պատուով են, և փակագծեալը գուշակութեամբ դրած են:  
5. Ոչ համառոտ տառերն, որ դրացի և ընկեր էր Աստուածածին՝ մի և նոյն մենաստանին մէջ, այլ աւետարանի խաչափայտին ըսել կ'ուզէ.

տուեք, զոր և արտաքուստ՝ ալ ճոխարար «զարդարեաց», ինչպէս կը կարդացուի եղծուած էջին մէջ: Թող որ Յ իւր քով թուականութեան նշան մ'ալ չունի, և ոչ գէթ միւսին թ. համառոտագիրը. և յիշատակարանին մարմնէն եւս անջատուած է, ինչ որ անսովոր է տարեթուոց համար:

Հետեւանքը: Շատ պարզ է. այս տառն ըստ իս ուրիշ բան չէ, բայց մենագիր մը, ծագած նոյն ինքն «Յիսուս» անուան նախատառնէ, և համազօր Յունաց հնաւանդ I մենագրին<sup>1</sup>: Կարեւորագոյնը կայ. կաբրուլ յառաջ կը բերէ քանի մը դրամաձեւ պահպանակներ Գ-է դարբէն, որոց վրայ քանդակուած է փրկչական անուան յունարէն բարդ մենագիրը (Ա, 1790, 1823-31): Ահաւաստիկ մեր առաջին կրտսեանը՝ համոզուելու համար, թէ մեր ծածօթ Յ ալ ապահովապէս գրուած է Մլքէի կողմանէ իրբեւ պահպանակ մ'աւետարանին, որպէս զի չկորսուի կամ չզորացուի: Այս կարծեացս կը նպաստեն նաեւ իւր դրացութիւնը մատենին պահպանութեան պատուերին, զոր կու տայ նուիրողը. մեկուսացումն լուսանցին կեղոնը. անսովոր եռապատիկ մեծութիւնը բնագրին տառերէն, որոյ նման թուականի հանդիպած չեմ այլուր. և ասոցմէ աւելի՝ նոյն իմաստով գործածութիւնը յաջորդ օրինակին մէջ եւս, որ թէեւ աւելի ուշ՝ բայց սահմանուած է ամէն կասկած ցրուելու, և հաստատուելու թէ Յ իւր պահպանակ կը մտնէր զանազան առթից մէջ:

Գ. Տակաւին մեր երախտաւոր Կիպրիանոսն է՝ որ երկար դարերու շրջանի միջէն, ուր աներկբայապէս ապրած է տառդ անընդհատ, — թէեւ առ այս մեր հին յիշատակարանը շատ ոխըք են տակաւին, — առած ու պահած ունի ազոր սովորութիւնը. բայց բազմապատկեալ ու խաչերով բաղադրուած, իր Յիսուս խաչեալ

կամ Յիսուս և Խաչը. ու կը զնէ «Յլի և գանի»<sup>2</sup> աղօթից վերջը, սա ձեւով.

Յ Յ Յ Յ † Յ Յ Յ Յ † Յ Յ Յ Յ †

և կը յարէ. «զայս մը յիս գրէ շուրջ զգանաւն, և զ'ա ի վերայ ծարին գրէ, Գ հետ կրկնէ»: Ապա կու տայ ազոր համատուն ալ այսպէս.

Յ Յ Յ Յ † Յ Յ Յ †

և կ'ըսէ. «զայս և գիրս գրէ շուրջ զգանաւն, և զ'ո ի վերայ ծարին»: Ուրեմն պարզ է այժմ և Մլքէի մենագրին նշանակութիւնը. յին ինչպէս պահպանակ է հոս, նոյնպէս էր աւետարանին մէջ ալ, և հաւանորէն քան զայն իսկ շատ յառաջ, ինչպէս ենթադրել կու տայ անոր յունարէն հունանիշը:

Իրտեղի է՝ որ այս տեղ կը գրուի 12 և 7 անգամ, որոնք երկուքն ալ խորհրդաւոր թուեր էին, և զորոն կամաց թուուած ընտրել մին կամ միւսը. նոյնպէս էին 1 և 1000: Գարձեալ՝ «շուրջ զգանաւն» գրել՝ կը նշանակէ ցաւած տեղոյն վրայ, նման ժգ գրին (աստ, 434). և մի կամ հազար յ «ի վերայ ծարին» կը թուի պտուցին ծայրը կամ կեղոնը. բաւական համբերութեան գործ, զոր միայն պատահական երկայնատեղութիւնը կարող էր յանձն առնուլ:

Գ. Արեւմտեայց ու Կոպտաց մէջ հին ժամանակ ծանօթ էր ուրիշ պահպանակ մը, քառակուսի գրութեամբ՝ կազմուած հինգ հնգատառ բառերէ. և այնպէս յարմարած՝ որ անոր արտաքին չորս կողից վրայ մի և նոյն բառը կը կարդացուի: Նոյնն ընդունած են նաեւ Բիւզանդացիք, և օրինակ մը կը գտնուի Պարիսու մատենադարանին յոյն գրչագրի մը մէջ. բայց սա տարբերութեամբ՝ որ այս տեղ տառերն անջատարար ամփոփուած են աղիւսակի մը մէջ (Կարբուլ, Ա, 1811-6):

Վերջնոյս նման ձեւ մը պահած է դարձեալ Մլքէի աւետարանը, զծուած Յովհաննու պատկերին ետեւ, նոյն իսկ զըջու-

1. Martigny, Dict. — Monogramme.  
2. Տեղական ցաւ կամ այսոյց կը թուին ըստ հետագայ բազմաթիւութեանց:

Թեան թուականէն, ըստ որում իւր կից յիշուած կայ թագուհին: Ահա այդ ձեւը.

Է	Յ	Ա	Գ	Ա	Յ	Է
Յ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Յ
Ա	Գ	Ա	Բ	Ա	Գ	Ա
Գ	Ա	Բ	Ա	Բ	Ա	Գ
Ա	Բ	Ա	Վ	Ա	Բ	Ա
Գ	Ա	Բ	Ա	Բ	Ա	Գ
Ա	Գ	Ա	Բ	Ա	Գ	Ա
Յ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Յ
Է	Յ	Ա	Գ	Ա	Յ	Է

Ա Ի Ե Տ Ա Բ Ա Ն Ս

ԱՅ ՈՂՈՐԾԻ ՍՍԱՅՈՂԻ  
ՍՈՐԻՆ ՄԼՔԷ ԹԱԳՈՂՈՅՑ

Կեղերոնի վճարէն մեկնելով, ուր ալ ուղուինք՝ կը գտնենք «Վարազայ է»՝ խօսքը՝ յարելի ստորին «աւետարան» բառին: Կարելի է զայս ալ պահարան մը համարել, նկատելով՝ որ թագուհին արձակ յիշատակարաններ ունի արդէն, և անքնական էր պարզ տեղեկութիւն մ'այդքան խրթնացնել. թէ ուրիշ նման յիշատակարանք չկան այլուր. և թէ սա ժամանակակից՝ ուստի և նմանութիւն է պահպանակաց Բիւզանդացոց՝ որոց սովորութեանց և զգեստուց անգամ նմանելու ձկտումը շատ զգալի էր Արժուոնի արքունեաց մէջ: — Նշանակեալն «Վարազ» անուանի ուխտավայր մ'էր՝ տասներկու եկեղեցեօք և ս. Խաչի նշխարովը, ուստի և յարմար՝ նիւթ լինելու պահպանակիս: Չորս անկեանց «է» տառը բայ, բայց և աստուածական անունն է՝ քարոզուած չորս աւետարանիչներէ՝ աշխարհիս չորս ծագերը. — նախնեաց մտածումընք են ասոնք: — Իւր մասն է և սրբազան անունս՝ «Անասարան» . և դեռ աւելի՛ յարակից մաղ-

թանքը Մլքէի համար, յորում կարծես լռելեան նաեւ պահպանակիս օգնութիւնը կը խնդրուի:

Այս օրինակս ալ միայն չէ. կայ և հետագայն, որ բուրովին ապահով է, եթէ առաջինս ենթադրական համարուի:

Գ. Թուականէդ 582 տարի վերջ կը հանդիպինք ուրիշի մը, զոր դարձեալ պահած է մեր թանկագին Կիւրիանոսը: Էւ է՝ միատող աղիւսակ մը, եօթն կարմիր մենագրովք, որ կը կոչուի «մատանահար», այս ինքն մատանայ կամ կնքոյ ձեւ, և է այս.

Խ Ա Ք Է Վ Փ Բ

Ասոր ներքեւ նոյն ուղղութեամբ պահած է կարմրագոյն դաստակ մը՝ որ դէպ ի յաջ կը նայի. և ստորեւ գրուած է. «Չեռն Տն. է, և եւթն մատանահար նորին. և մեկնութիւն գրին որ ի մատանահարին գրեալ էր և այսով մատանահարեալ»: Ուրիշ ախտաբք մը՝ գրուած 1779ին՝ կը ձեւացնէ մատանահարն առանց դաստակին, և կը պարզէ ու կը լրացնէ մեր օրինակին այդ միջին տեղեկութիւնն՝ ըսելով. «Տէր Յս. Քս. գրեաց այս և զիրս և առաքեաց առ Աբգար Թագաւորն. և ի տեսանել զորոյն իսկոյն փառատեցաւ ցաւն ամենայն ի յանձնէն». և իբր թէ նոյն թագաւորը զայն իւր մատանոյն վրայ «գրեալ է և այսով մատանահարեաց. և է դեղ ամենայնի»: — Մեր կիւրիանոսը մենագրոց մեկնութիւնն ալ կու տայ, որ սակայն քմածին կը թուի և քան զձեւը կրտսեր. «Խէն, այս ինքն իսաչեալն Ած. ի իսաչին հեղուսեաւ վասն արարածոց: — Անն՝ սուկ մարդ ոչ, այլ Ած. և մարդ ճշմարիտ: — Քէն՝ քերովքէից վերայդիտողն, որ հանգչի ի վերայ նորայ: — Էն՝ ես եմ Ած. և չիք այլ

1. Բնագրին մէջ առաջին տողի առաջին ի՛ լծորդաբար Է, և չորրորդին վերջին Գ՝ սխալմամբ Յ գրուած է.  
2. Կրօնական պատկերներու վրայ Աբգարու բուն

Թուրք գործածուած է իբր պահպանակ Կարբու: Ա, 1808-10, '14). Բայց հնաստու լի ճանաչի մեր մատանահարը.

որ, — վե՞ն՝ վե՛նագոյն Աժ. աստուծոց: — Փիւր՝ փրկիչ և կեցուցիչ ամենայն աշխարհի: — Բենն՝ բովանդակ և յաւէ- ժարար կենդանի եմ յարտեան»: — Ասոր կը յարէ խրատս. «ի վերայ խոցի և ուռուցի գրէ զայսքան բանս, լաւնայ Ավ.». դարձեալ ժգ գրին ոճով (աստ, 434): — Սակայն մեր 1773ի արտարքն ասոր փոխան կը յանձնարարէ գրել լոկ մենա- գրերը, և այն՝ թղթի վրայ. «Չայս եօթն գիրն գրէ մէկ թղթի վրայ, հիւանդին և ցաւագարին վիզն կամ ցաւած տեղն կա- պէ»: Իսկ 1761ի գրապանակ մը կը պատուիրէ մենագրերը գրել խոցին վրայ, և մեկնութիւնը կարգաւ. «Այս և գիրս ղեղ է խոմրոյ խոցի. գրէ վր. խոցին, պատմութիւն վր. կարգայ, բ(ժ)շկի Ավ. այլ բազում ցաւոց ղեղ է Ավ.»:

և. Արեւմտեայց պահպանակները միշտ շարժական չէին, և միայն մանր իրաց

արձանագրութեան մը, որ ցայսօր ազու- ցուած կը մնայ Լէժմիածնի կաթողիկէին որմոյն վրայ: Աղոր ձեւն յառաջ բերած է Հ. Ալիշան՝ Այսրարատի մէջ (213), ուսկից և ես կ'առնուի վերստին:

Հիւանդ Ստչիզովսկի վերստին հրատա- րակեց զայս ճշդագոյն ձեւով ու մեկնեց յաջողութեամբ՝: Ուղղեց նա բուրբակի մէջ առնուած խաչը, տալով անոր վերին թեւոյն մեր Ք տառին զուրիսը, որ արդէն կայ և քանդակին մէջ. այսու կը ձեւա- նայ փրկչական մենագիրը՝ որ կազմուած է խաչածեւ բազադրութեամբ յունական X և P տառից<sup>2</sup>, որ են ΧΡιστος անուան առաջին երկու գրերը: Խաչածեւին ան- կեանց մէջ գրուած կան հաւանօրէն «Յի- սուս» և «Զուրիթայ» անուանին: Իսկ շրթ- ջանակին վրայ՝ «օգնեա ամենայն աղօթո- ղաց յեկեղեցւոջ»: Բուրբակին ներքեւ ձա- խակողմը՝ «տէր ողորմեա ծառայի քում Արքեայ», և աջակողմը՝ «և տէր ողորմեա Ելպիդեայ», որոնք երկու ամուսինք են, խորհրդանշուած՝ ըստ իս՝ զոյգ մ'աղաւ- նիներէն: Այս ընթերցուածը կը հանէ Ստչիզովսկի՝ լրացնելով յունարենին բա- ւերը՝ որ պակասաւոր են: Իսկ ստորին պնակտին վրայ կը կարդացուին՝ Դանիէլ, Տիրէր և Գարիկինիս անուանք, զորս մեկ- նիչը կը մերձեցնէ Հայերէն (Դանիէլ), Տի- րայր և Գարեգին ձայնից: Զասոնք փոքր ի շատէ նոյնպէս կը կարդայ և Հ. Ալի- շան: Վերջինս յունարենի գործածութիւնը կը մեկնէ՝ նոյն քանդակն երիցագոյն հա- մարելով քան զվահանեան վերաշինութիւն կաթողիկէին և քան զգիտ զրոց. իսկ միւսը կ'ուզէ՝ որ յետ հայ տառից ալ յու- նարէնը ղեռ երբեմն շարունակուած լինի մեր մէջ. Բայց ինձ համար կարեւորն այս չէ. այլ այն՝ թէ աղօթաւայրին վրայ այդ սրբազան նշանը, իրենց մէջ ու շուրջ զե- տեղուած ընտանեաց մ'անուանք, և հա- մառօտ հայցուածք, բուրրն ալ անսովոր



վրայ չէին գրուեր. կարբոլ օրինակներ կու տայ անոցմէ՝ որ քանդակուած էին տանց ու հասարակաց շինուածոց վրայ (Ա, 1844-5): Ախորժակն ուսելով կը բացուի. կ'ու- զեմ ես այդ սովորութիւնը մեր մէջ ալ տեսնել: Ոստմամբ մը մինչեւ Ե դարու սահմանները՝ կը պատահինք յունարէն

1. Լէժմիածնի Աւետարանը. Թղ. Հ. Բ. Պելեգի- ճեան, էջ 7.

2. Կը փորձուի խորհիւ՝ թէ մեր ք կրնայ ծագած

լինել նոյն մենագրէն, որոյ ճիշդ ձեւը կը կրէ, մանա- ւանդ Հին Կրկաթագրին մէջ: Թերեւս ի յարգանս «Փրիս- տոսի» զոր պիտի գրէր իւր Հայցոման օրէն իսկ.

հին հասարակ արձանագրութեանց մէջ, որիւր բան չեն ցուցներ մեզ, եթէ ոչ՝ դարձեալ պահպանակ մը, զոր բարեպաշտութիւնը՝ միացած առատաձեռն նուերի մը հետ՝ զետեղած է այդ տեղ:

Գ. Վաղարշապատի մօտ ստեղծան չորս հին խոյակներ, որոնք այժմ կը պահուին յԷջմիածին: Ասոնց վրայ կայ մի մի մեծ նազիր յունարէն. մէկը մի անգամ է միւսն երեք կրկնուած: Ստչիգովսկի զատոնք ալ կը մեկնէ (անդ, 9): Առաջինն է խաչը համաչափ միագիծ թեւերով. և իւրաքանչիւր թեւոց ծայրը գրուած են այս տառեր N, A, C և OY միացեալ. իսկ ստորին և աջակողման թեւոց անկեան մէջ կայ աղեղնածե կապ մը՝ որ ստորին թեւին հետ կը ձեւացնէ P գիրը, զոր զնեւով միւս չորս տառից միջեւ, կ'ունենանք NΑPCOY = Ներսեսի անունը՝: — Միւս մեկագիրն է խաչ մը նոյն ձեւով. թեւոց ծայրերն ունի K, A, A և OY գրերը. և չորս թեւոց անկիւնները շօշափող բոլորակ մը՝ որ կը կազմէ Θ. ասոցմէ եւս կը ձեւանայ ΚΑΘΟΛΙΚΟΥ = կաթողիկոսի բառը համառօտուած: Մ'վ կրնայ լինել այս Ներսէսը, եթէ ոչ համանուն երեք առաջին հայրապետներէն մին, որ շինեք է գաղտնք և իրենց վերուցած տաճարը: իսկ ինչչ նպատակ ունեցած է իւր անունը զանգելու խաչին հետ, և զայն քանդակելու սրբավայրի մը սեանց զլուսի, եթէ ոչ՝ իրեն համար պահպանակներ յօրինել, ինչչպէս ըրած էին նախորդին անձինքը:

Ե. Պահարանի վրայ գրուածն անհրաժեշտ չէր. երբեմն անոր տեղ կը բռնէին լոկ խորհրդաւոր ձեւեր կամ պատկերներ, և կամ անոր հետ խառն կը գործածուէին: Ասոցմէ շատ ունի կարբու (Ա, 1818-21, '25-33): Մեզ եւս չեն պակասիր առոնք: Զոր օրինակ Անւոյ միջնաբերդին որմոյն վրայ քանդակուած կան երկու ձիաւորք

իրարու հանդէպ, որ մի մի վիշապ կը տիգահարեն (Շիրակ, 57). և որոնք քնականապէս զօրական սուրբերն են՝ Գեղորգ և թէնդորոս կամ Սարգիս: Ինչ պատճառաւ դրուած են հող առոնք, բայց եթէ պահապան լինելու երեսիկ և աներեւոյթ թշնամեաց յարձակմանց դէմ. զի սրբոց և տէրունի պատկերներ սոյն վախճանաւ գործածուած տեսանք արդէն Գրապանակաց մէջ եւս: — Այդ պաշտօնն ամենէն աւելի յանձնուած էր խաչին. և ասոր կը հանդիպինք մեր հին աշխարհի բոլոր անկեանց մէջ: Բագրատունեաց ոստանին հըզօր պարսպաց վրայ կանգնած է այն իւրբեւ ամուր պատսպարան նիզակաց ու բարանաց դէմ (Շիր. 38-9): Կը տարածէ իւր թեւերը եկեղեցեաց որմոց վրայ, սկսեալ Տեկորոյ տաճարէն՝ որ գործ է Ն դարու (անդ, 131-3): Կը զարդարէ Անւոյ արքունիքաց պատը՝ երկզկի արծուենչաւ նին հետ միասին (անդ, 142): Կը կանգնի մահարձանի ձեւով գերեզմանաց վրայ՝ պահելու համար հանգուցելոց ոսկերտտին, որոյ մասին ուրիշ անգամ: Այս նպատակաւ ննջեցելոյն հետ կը թաղուէին երբեմն նաև սրբոց մասունք, ինչպէս կը պատմուի մեծին Ներսեսի համար (Սոփիերք, է, 52). պատարագի նշխար մը, ինչպէս հրամայեց Մխիթար Կոչ իրեն համար (Վերակ. 242), և այլն:

Ը. Սակերբանի առ Անտիոքացիս խօսած «Յաղագս մկրտելոց» ճառին մէջ կայ այս տեղին. «Ինչ բռել անոնց մասին՝ որ կը վարին հմայիւք ու բժժանօք, և Աղեքսանդր մակեդոնացւոյ դրամները կը կապեն իրենց գլխին և ոտից»: Հետաքրքիր քննութիւն մը ցոյց տուաւ ինձ՝ որ սոյն կտորս հայ թարգմանիչը կը վերածէ ծննդական կնոջ պարագային, որոյ մէկ գիրը տեսանք յառաջագոյն (աստ, 432). կամ թէ ըսեմ՝ կը հայացե՛կ, կը մերձեցնէ հայ ընթերցողաց բարուց, — բան մը՝ որ յաճախ կը տեսնուի Ե դարու թարգմանութեանց մէջ, — և կ'ըլէ. « Կանայք յերկուսն մերձեալ՝ զդահեկան զԱղեքսանդրի զմակեդոնացւոյ կամ զդրամ ի գլուխ և յտաս կապեն »

1. Այդ ռոմ մնացորի շատ կայն Քիզանդացոց մէջ, որոց որմոց վրայ իսկ էր տեսնել յաճախ (Schlumberger, Un empr. byz. 89, 393, 561. — L'Épopée byz. 318, 498, 764).

(Ճառք, 169-70)։ Այս փոփոխութենէն յառաջ կու գան երկու կարեւոր հետեւու-  
թիւնք։ Առաջին՝ թէ ծննդականի պահպա-  
նակ գործածելը մեր մէջ մինչև է դար կ'ել-  
նէ։ Երկրորդ՝ թէ մեզ ըստ բազում գլխոց  
մերձաւոր Ասորոց այդ աղբքանդրեան  
յուրութիւնը, որ շատ տարածուած էր յԱ-  
րեւմուտս ալ, մտած էր և մեր մէջ. վասն  
զի եթէ այդպէս չլինէր, թարգմանիչն ամ-  
բողջ խօսքը պիտի հայացնէր, և ոչ թէ  
լոկ անոր կէսը, յորինելով բարուց ան-  
կապ խառնուրդ մը։

Այդ դրամներէն շատեր գտուած են ու  
կը պահուին Պարիսու թանգարանին հա-  
ւաքման մէջ. և մեծագոյն մասամբ մէկ  
երեսին վրայ կը կրեն Աղեքսանդրի գլու-  
խը հերակլածեւ, իւր անուամբ միասին.  
միւսին վրայ մատակ էջ մը յաւանակով,  
և ներքեւը կարիճ մը և փրկչական ա-  
նունը (կարբու, Ա, 1790)։ Բաւարանս  
կու տայ ձեռն ուրիշ երկու դրամոց ալ.  
մին պահուած ի վատիկան, մէկ կողմն  
Աղեքսանդրի գլուխը, ծածկուած առիւծե-  
նով մը, վզէն կախած դիմակ մը, բերա-  
նին մօտ արեգակ մը, և շուրջանակի իւր  
անունը լատիներէն. իսկ միւս կողմը քրիս-  
տոսեան մենագիրը՝ բաղադրուած X և P  
տառերէն։ Երկրորդն է Բրիտանական թան-  
գարանին, ձուածեւ, և ցոյց կու տայ մէկ  
կողմը միայն՝ Աղեքսանդրի կիսադիմով,  
որ կը կրէ Ամոնի եղջիւրը, և շուրջը յու-  
նարէն հինգ բառեր (անդ, 1790-1)։



Թ. ԲԺԺԱՆՔ

1. — Մեր նախնեաց պահարանք լոկ  
գրի մէջ չէին կայանար. ցարդ յիշուած-  
ներէն զատ կը յարգէին անոնք ուրիշ գա-  
նազան նիւթեր եւս, որոց աղբիւրը նոյն-  
պէս շատ հին է, նոյն ինքն հեթանոսու-  
թիւնը։ Բոլոր Արեւելք կը գործածէր ա-  
սոցմէ (Դոշլ. Ա, 271)։ Յոյնք և Հռովմա-  
յեցիք կը վարէին քանդակեալ քարերով,  
մետաղներով ու բոյսերով (Դարեմբ. Ա,  
252-4), որոցմէ ս. Կիւրեղ ղեռ կը տես-

նէր իւր օրով (Կոչ. ընծ. Դ, 721)։ Յուդա  
Մակարէի զօրաց քով անգամ գտուեցան  
անոցմէ՝ հեթանոս ազգերէն առնուած (Բ  
Մակ. ԺԲ, 40)։ — Քրիստոնեայ Արեւ-  
մուտքը չուզեց մերժել զանոնք, որով իւր  
դէմ սրեց Աթմասի, Ոսկերբանի, Ելի-  
զիոսի և ուրիշ ս. Հարց լեզուները (կա-  
բու, Ա, 1788-90)։ Իլլւանդացոց ծա-  
նօթ Γεωπόνικα մատենանը, որ ինչ ինչ  
փոփոխութեամբ՝ արաբերենի և անտի եւս  
հայերենի թարգմանուած է, նոյն ինքն մեր  
Վաստակոց Գիրքը, ունի ղեռ բաւական  
բժժանքներ խոտերէ, պէսպէս խառնափն-  
դոր նիւթերէ, ծրարներէ և ծխումներէ, ի  
պահպանութիւն տանց, արտորէից, խա-  
շանց ու մեղրոց (հ. ՄՂԳ, յն. էջ 1094).  
յօժանդակութիւն դժուարածին կամ վիժող  
կնոջ (ձև, 416)։ արեքսութեան դէմ (ձՂԶ,  
520). կարկոյի ամպերը ցրուելու (ՂԵ, 60).  
գազանները հալածելու (Իէ, 195), և այլն։

Վաստակոց գիրքը միայն թարգմանուած  
չէ, այլ և գործածուած մեզմէ։ Արդէն ա-  
նոր բժժանաց նմանողներ շատ կանուխ՝  
է դարէն իսկ կը յիշուին մեր քով, որոց  
կարգին կը թուէ Մանդակունին «զօսկերս  
ձկանց և սողնոց, զծրարս բժժանաց ի ձե-  
ռին և ի յակին և ի պարանոցի կապել»  
(185)։ Բայց յայտնապէս չի ըսեր՝ թէ ե-  
կեղեցականք եւս այդ նիւթերով կը գրա-  
դէին, Յանախապատում գրոց մէջ ալ կը  
կարդանք. «Ասեն բժիշկք՝ թէ գոն ար-  
մատը որ հալածեն զդեւս ի մարդկանէ»  
(ԺԿ, 148). եթէ ազոնք դեղեր չեն յօգուտ  
կարծեցեալ դիւահարութեանց, այն ժա-  
մանակ յուսմական իմաստով կը գործա-  
ծուէին, ինչպէս կը գտնենք յՔ դարուն՝  
ըստ Ալաւկայ որդւոյն. «Ի բացուստ, կ'ը-  
սէ նա, արմատս բուսոյ հատանն և լիցս  
(ծրար) կապեն ի ծառս տանձոյ և յայլ  
թուփ՝ որ լինի շուրջ գետեկաւն, և ա-  
սեն՝ թէ դեղ է ջերմնոտի» (Կանոնք, ԳԶ)։  
Ասոցմով գրադողը ղեռ ուսմիկ ժողովուր-  
դը կը թուի, հետեւաբար նուազ հետաքրք-  
րական ինձ, որ խնդիրը կ'ուզեմ պաշ-  
տօնական սահմանի մէջ նկատել միշտ։

2. — Սակայն դժուարին էր հայ կղե-

րին՝ « ժողովրդեան այդ զաւակաց՝ - փակուած մնալ զրի գծերուն մէջ, ու շտաբուիլ հոսանքէն: Էւ արդարեւ - իբր օրինակ յիշենք - մեր գրչագրատան մէջ կայ բժշկարան մը, գրուած 1294ին, կոռիկոսի Հիթուս իշխանին համար, որ ունի տարօրինակ պաշտօն մը՝ « փէնտնայ » կոչուած խոտէն յուռութ պատրաստելու համար: Այս բոյսը, ինչպէս կ'ըստի հոն, հրեշտակ մը ցուցեր էր Մովսիսի՝ երբ « երթայր ընդ Սինայ ». և մարգարէն անով բժշկեր է իւր դիւահար զոջանչը: Ուրեմն ինչո՞ւ չըուփէր Հայոց այսահարներն ալ: Հետեւաբար անոնք եւս ընդունեցան, և ահա իւր եզական պատրաստութիւնը:

« Երթա(յ) քահանայն խաչիւ և աւետարանաւ և սաղմոսիս » հոն՝ ուր կը գրտնուէր այն, և « ողջոյն տայ խոտին », - կ'ենթադրուի՝ ըսելով, Ողջոյն քեզ, - իբրեւ աւելի քան ի բնէ սրբազան իրի կամ նշխարի մը, իբր կենդանի էակի մը. ու կը սկսի պաշտել յի սաղմոսը, և ապա այս ազօթքը. « Աւրհնեալ ես, տէր Աստուած, որ արարեր զերկինս և զերկիր, և վասն արդարոյն Մովսէսի շնորհեցեր զսա ի բժըշկութիւն: Կարդամք առ քեզ, տէր Սաբաւովթ, տուր զօրութիւն փէնտնախս, զի ի քէն է զօրութիւն և փառք յաւ ... »: Պաշտօնն այսքան դիւրաւ չի վերջանար. երեք անգամ կը կրկնէ նոյն սաղմոսն՝ ուրիշ երկու ազօթիւք և ընթերցուածօք եւս: « Էւ ապա, կ'ըսէ, փորէ՛ և հան՝ որ ի տակէն չմնայ ի տեղն ». իբրեւ անպատեհ անոր նուիրականութեան, թէ ուրիշ անապաշտական գաղափարով մը, յայտնի չէ: Էւ կը պատուիրէ՛ թէ « սրբութեամբ կայ զնա ». խրատ մը՝ որ այդ բոյսը խաչի կամ սրբոց նշխարաց աստիճանին վրայ կը դնէ:

Բազմաթիւ են անոր օգուտները. « դեւք սարսեն ի նմանէ և ամենայն արտք դեւականք ». ղեկթափ է մահացու թոյնի. անդաստանաց մէջ դրուելով՝ կը պահէ կարկտէ և ուրիշ փնտաներէ. և տան մէջ կը պահպանէ չարէ. բնակարանի մէջ երբ ծխուի՝ « կախարդութիւնն ի վայր ընդնի ». բարձի տակ զետեղուելով՝ անոյշ երազներ տեսնել կու տայ. անոր պտուղն իւր վրայ կ'ըղը զերծ կը մնայ զազաններէ. և այլ շատ յատկութիւններ՝ զորս չի յոգնիր թուել մեր բժշկարանը, - առանց խորհելու թէ այդ ամենաբուժ խոտով կը փակեր ընթերցողաց առջեւ իւր արուեստին ասպարէզը: - Էւ « քահանայն » որ կը հանէր զայն, և նոյն մատեանը ստացող պատմազիր փառաւոր իշխանը, և անոնց հետեւող բազմամբոխ ժողովուրդը՝ կը հաւատային այդ բոլորին՝ ինչպէս իրենց գոյութեան: Աղոցմէ յառաջ կը հաւատար իմաստունն Մխ. Գոշ եւս, որ կը հաստատէ՝ թէ « Փեննա ... ընդդիմանայ դեւաց » (Առակք, ԻԹ): Էւ ինչո՞ւ Յանախապատմի ակնարկած դիւահալած արմատներէն մին ալ չլինի այս:

Աւելի վերջերք կը յիշուին յանուանէ և ուրիշ զարմանալի բոյսեր, յատկապէս լոշտակը, որոցմով զբաղիլ շատ երկար կը լինէր, և զորս Հ. Ալիշան փոքր ի շատէ նկարագրած է արդէն (Հին Հատար, Գ, 72-9). և լոշտակի պատրաստութեան ազօթքն ամբողջապէս յառաջ բերած է Սրուանձտեան (Մաննայ, 327):

Բայց մեք մեր նախնեաց թողունք այդ ամէն սնտոի պահպանակները, անոցմէ յուսացուած երեւակայական օգուտներով հանդերձ, - նսն՝ դարբերու նսն՝ պտուղներ. - և կնքենք մեր ուսումնասիրութիւնը:

Հ. ՎԱՐԿԱՆ ՀՅՈՒՆԻ